




ՄԱՀՏՈՑ-ՄԵՍՐՈՎ ՊԸ

ՀԱՅՈՑ ՏԱՐԵՐԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒ-
ԹԵԱՆ ԳԻՒՏԸ

7/ XI - 1922



ԱԿՁԲՆԵԿԻՐՈՒԹԻՒԽԵՐ ՄԵՐ ԱԶԳԻ ՄԷՋ



Հ Հայոցասեհառութեան Տ. Տ. Գէորգաց Ե,-ի Աստուածընոտիր Կա-
թողիկոսի Ամենայն Հայոց

Ե Ի

Ի Պատրիարքութեան Կ, Պօլսոյ Ամենապատիւ Յովհաննէս Արք-
ևպիսկոպոսի Արշարումւոյ

Աշխատասիրութիւն

Գրիգոր աւագ քահ. Մանուկյանով

Թիֆլիս

Տպարան «Նադեժդա» Միկայլովսկի պլ. № 5.
1912

”Ո՞վ ինձ կտար, իմ խօսքերը գրել գրքի մէջ,
երկաթէ գրիչով կապարի վերայ, և կամ փորա-
գրել քարի վերայ, ապագաներին վկայ լինելու
համար. Յուր. ԺԹ.—23:“



Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Գևորգ Եղիկ Շայ-
բագոյն Պատրիարք Կաթուղիկոս Ամենայն Հայոց

Նորին Վեհափառութեան Տ. Տ. ԳԵՐՈԳԱՅԻ
Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի Ամենայն
Հայոց

b. ւ

Ասպետի Խայսերական շքանշանաց
Յաւերժայիշատակ Հայոց „Գրերի“ դիւտի 1500
ամեայ յօբելեանի առթիւ

b. ւ

Ի չնորհաւորութիւն առաջին Անուանակոչութեան
մեծ Հայրապետիդ
Երկտող Գրքոյկո խոնարհաբար նուիրում է՝

ԱՇԽԱՏԱՄԻՐՈՂ:



Ս. ՄԱՇՏՈՅ-ՄԵՍՐՈՎԴՊՐ

ՄԱԴՏՈՑ-ՄԵՍՐՈՎ ՊԵ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՏԱԹԵՐԻ ԳԻՒՏԸ

Մաշտոց-Մեսրովպը 354 թուին ծնաւ Տարօն (Մուշ) գաւառի Հացեկաց—Հացիկ գիւղումը. Նորա Վարդան անունով հայրը լինելով բարի և Աստուածանէր մարդ՝ հոգացել էր իւր որդուն կրթել ժամանակի ուսման և գիտութեան մէջ։

Մեսրովպի առաջի և խսկական անունը Մաշտոց էր. Մեսրովպ՝ յետոյ կոչուեց, սաւ իւր մանուկ հասակում մնուելով բարեպաշտութեամբ և Աստուծոյ վախովը և վարժուելով Հելլենական ուսմամբ, և հմուտ լինելով Ասորի և Պարսիկ լեզուների գիտութիւններին՝ դարձաւ Պարթևածին Մեծ Ներսիսի աշակերտը և եղաւ նորա ատենադպիր. ներկայ եղաւ նորա մահին և լսող մարդարէական գուշակութիւններին։

Մաշտոցը, Մեծն Ներսիսի մահից յետոյ՝ գնաց Արքունի գուռը և Հայոց Վարազդատ, Արշակ, Վաղարշակ և Խոսրով թագաւորների ժամանակաների կարգուեցաւ թագաւորների գիւնաւագիր. այս պաշտօնը՝ իւր բազմահմուտ գիտու-

թեամբը մինչև եօթը տարի Խոսքով Գ. Հ. տարին շատ յաջողակ կատարեց. և այսպէս հմտացաւ թագաւորութեան բոլոր կարգերին և զինուորական բոլոր վարժութիւններին, որով դարձաւ ցանկալի՝ իւր զօրականներին և սիրելի՝ թագաւորին և մեծամեծներին:

Մաշտոցը Հայոց աշխարհի աէրութեան այնպիսի ալէկոծ ժամանակումն անդամ՝ առանց վը հատելու կատարում էր ատենադպրութեան և զինուորութեան պաշտօնը, և նորան զուգընթաց միշտ պարապում էր Աստուածապաշտութեան և Ս. գրքերի ընթերցանութեան գիտութեամբ, որոնք էին Յոյն և Ասորի գրով և խօսքով:

Ահա, նա այսպէս հոգւոյ մէջ վառեց Աստուածասիրութեան կրակը, ուստի թողեց երկրաւորը թագաւորին ծառայելու փառքը ու պատիւը՝ հագաւ վանականի զգեստ և մտաւ Գողթան դաւառի մի մենաստան ծառայելու երկնաւոր թագաւորին, և Աստուածային կոչմամբը ձեռնադրուելով քահանայ՝ աւելի և աւելի փայլեց հրեշտակակրօն սրբութեամբ, գնաց անապատ, վարեց միայնակեցական խստակրօն կեանք, համբերութեամբ տարաւ քաղցի, ծարաւի և բանջարանաշակութեան նեղութիւնները, խարազ հագնելը, բաց գետնի վերայ պառկելը և գիշերները ոտքի վերայ անքուն և անհանգիստ աղօթելը, որոնցով իրան գրաւեց շատերին և աշակեր-

տեցրեց Ա. գրքերի ճշմարտութիւններին:

Մաշտոցի սրտումը արդէն շողել էր Ա. Հոգւոյ ջնորհաց կայծը՝ և որը աստիճանաբար բորբոքվում էր, որ ազգի հաւատքի լուսաւորութեանը հետ էլ՝ Հայ գրի ուսման և գիտութեան լուսաւորութեամբ փայլեցնէ. ուստի աշակերտներով անապատիցը իջաւ Գողթան գաւառի մերձակայ տեղերը, որտեղ տեսմնելով տգիտութեան և կոապաշտութեան խաւարով շաղաղուածներին՝ սկսաւ տեղական իշխանի օգնականութեամբ քրիստոնէական հաւատքի լուսովը՝ նորանց խաւարմտքերը լուսաւորել: Եւ որովհետեւ Հայերը տառեր չունէին՝ այս պատճառաւ Հայերէն գրել ու կարգալ չկար, այլ կարդացած գրքերը Յունաց և Ասորւոց լեզուներովն էր, որ նոյն իսկ կարդացողներին անհասկանալի, այսպէս էր նաև եկեղեցւոյ միջի կարդացմունքը՝ ժողովրդին բոլորովին անհասկանալի:

Մաշտոցի ամենօրեայ մտածմունքը այս մեծ դժուարութեան և չարիքի առաջն առնելն էր. և այս դիտաւորութեամբ՝ Հայոց Վռամշապհոյ թագաւորի հինգերորդ տարին գնաց մեծ Սահակ Պարթև կաթուղիկոսի մօտ, որին մանկութիւնից սիրելի և մտերիմ էր. և Հայերէն գիրը գտնելու մասին յայտնեց նորան իւր միտքը: Նորանք երկունքն էլ մի սիրտ և մի հոգի եղած փափառում էին Հայերէն գրերի գիւտը, և այս ջերմա-

գլն ցանկութեամբ կերպ-կերպ փորձեր արին՝
հայկական հարուստ բարբառի յարմարութեանը
համեմատ զբերը գտնել, ուստի սկսան ջերմա-
ջերմ աղօթք անել և Աստուծոյ օգնութիւնը
խնդրել:

Այս մասին առանց ուշացնելու՝ յայտնեցին
Հայոց բարեպաշտ Վուամշապհոյ թագաւորին. և
նա սկսաւ նորանց պատմել ասելով „Թէ Միջա-
զետք եղած ժամանակս լսեցի, որ Դանիիէլ անու-
նով մի Ասորի երեելի եպիսկոպոս՝ ունի իւր մօտ
մի տեղից գտած կամ յարմարեցրած Հայերէն
լեզուի նշանագրեր։“

Նորանք՝ ո. Սահակը և Մաշտոցը երբոր այս
բանը թագաւորիցը լսեցին՝ սկսան ջերմագին
աղաչել թագաւորին, որ հոգ տանի այն նշա-
նագրերը ձեռք բերելուց թագաւորը խսկոյն Խա-
գունեաց ազգից Վահրիջին հրովարտակով ու-
ղարկեց Հարէլ անունով այն երէցի մօտ՝ որ նա
առաջուց ասել էր իրան այս բանի համար, և
որը աւելի մօտիկ էր նշանագրերը ունեցող Դա-
նիէլ եպիսկոպոսին։ Հարէլ երէցը ինքն խսկ շու-
տով գնալով եպիսկոպոսի մօտ, նորանից տեղեւ-
կացաւ նշանագրերի մասին և առնելով՝ Վահրիջի
հետ տարաւ Հայոց երկիրը, որը խիստ մեծ ու-
րախութիւն պատճառեց թագաւորին, Հայրապե-
տին և Մաշտոցին։

Այն ժամանակ Մաշտոցը թագաւորի թոյլ-

տուռութեամբ սկսաւ հայ մանուկներին վարժեցնել Պանիէլեան նշանագրերի ուսմամբ. և այս նշանագրերի կրթութիւնը տարածել Հայերի մէջ: Եւ նոյն իսկ այս ժամանակ Ս. Սահակ Պարթև մեծ հայրապետը Մաշտոցին տուաւ վարդապետութեան աստիճանն և անունը դրեց Մեսրովպ, որպէս թէ „Մեծ-Բաբրի“ կամ „Մշու-Բաբրի“:

Մեսրովպը իւր սուր հմտութեամբը տեսաւ, որ այն նշանագրերը չեն կարողանում բաւականութիւն տալ Հայերէն լեզուի վանկերը և կապերը իրար հետ անսխալ կապելու, այլև հետաքրքրութեամբ գտաւ, որ այն նշանագրերը ուրիշների գիտութեամբ թաղուել և յարութիւն են առել, և կամ Յունաց և Ասորւոց խառն տառեր էին՝ անբաւական Հայ լեզուին, և կամ մեր նախնի հայերից հնարած նշանագրեր, որ մութը և անյաջողակ լինելու համար՝ մնացել են անգործագրելի:

Մեսրովպը, այս իսկ պատճառաւ Ս. Սահակի հետ մտածեցին ջանալ գտնել նոր նշանագրեր: Մեսրովպը ինքը յանձն առաւ այս աշխատութիւնը թագաւորի հրամանով և Ս. Սահակի հաւանութեամբ՝ հետն առաւ իւր ձեռնասուն աշակերտները գնաց Միջագետք Դանիէլի մօտ. բայց նորա մօտ ոչինչ չգտաւ, գնաց Եղեսիոյ Բաբելոս և Ամթայ Ակակիոս եպիսկոպոսների մօտ, կրկին ոչինչ օգուտ չգտաւ. և ժամանակը զուր չկորցնելու համար՝ աշակերտները երկու մասի բաժանեց, Միջագետքի կողմերումը դրեց Յոյն

և Ասորի դպրոցներումը վարժուելու՝ նորանց ուսմունքով։

Եղեսիայումը հեթանոսութեան օրերից ըսկած՝ իբրև բոլոր գիտութիւնների գիւան՝ կարուսման մի երեկի ճեմարան, որի իշխան և վարժապետը այն ժամանակումը Պղատոս անունով մի ճարտասան և անուանի հեթանոս մարդէ էր։ Մեսրովպը այս մարդու մօտ գնաց և իւր փափազը յայտնեց նորան, խսկ նա՛ նորան ուսրախութեամբ ընդունեց և շատ փորձեց տառերի գտնելուն՝ բայց հոետօրը չկարողացաւ յաջողացնել, ուստի Մեսրովպին յայտնեց, թէ ինձանից առաջ՝ այս Դիւանի վերակացուն՝ Եպիփանիոս անունով մի հեթանոս անուանի վարդապետ էր, որն այս Դիւանիցը առնելով ճարտարների զըրքերը՝ գնաց Կիպրացւոց Եպիփան մեծ եպիսկոպոսի մօտ և քրիստոնեայ եղաւ, այժմ՝ առանձնացել է անապատը, գնա նորան գտիր և նաթերևս կարողանայ լցնէ քո փափազը։

Մեսրովպը այս բանը լսելով դարձաւ Եղեսիոյ Ռաբելս եպիսկոպոսի մօտ. Եպիփանիոսի իմաստասէր միայնակեցի համար՝ ստոյգը տեղեկացաւ, որ նա մեռել է, միայն կայ նորա Հռուֆանոս քրիստոնեայ աշակերտը, որ խիստ քաջտեղեակ է Հելլէն դպրութեան արուեստին, և որը միայնացած գտնվում է Սամոս՝ այն է Սամոսատքաղաքում։

Մեսրովալը մի քանի աշակերտներով գնաց Սամոսացւոց քաղաքը, պատուով ընդունվեց տեղայն եպիսկոպոսից, և գտաւ Հռուփանոսին՝ սակայն նորանից էլ չգտնելով օգնութիւն, սկսաւ իւր բոլոր յոյսը դնել Աստուծոյ վերայ և արտասուալից աղօթքով խնդրել նորա օգնութիւնը։

Եւ երբոր Սամոսումը դառնացած սրտով աղօթում էր՝ տեսաւ, բայց ոչ երազ՝ քնի մէջ. և ոչ տեսիլ՝ արթնութեան. այլ իւր սրտի գործարանումը երեսութացաւ հոգեղէն աջ ձեռքի թաթ՝ որ զրում էր քարի վերայ՝ աւելի խորը զրօշմած՝ այնպէս՝ ինչպէս որ մէկ մարդ մատովը կակուղ ձիւնի վերայ զրէ տառերի ձեր, և այն՝ չէ թէ միայն երեսութացաւ, այլ նորա մտքումը անջնջելի տպաւորուեցաւ։

Այն ժամանակ անսպատմելի ուրախութեամբ վեր կացաւ աղօթքիցը, յայտնեց սրտագին գոհունակութիւնը շնորհքներ պարգևողին, և սկսաւ շուտով Աստուծատուր տառերը զրել մագաղաթի վերայ և տանելով Հռուփանոսի մօտ՝ ցոյց տուաւ նորան, թէ այս օրինակ զրերով բովանդակում են Հայերէն խօսքերի հնչմունքը։ Եւ Մեսրովալը Հռուփանոսի օգնութեամբ և խորհըրդով տառերի բոլորը զեղեցիկ ձեռվ յարմարեցը եւ նշանագրերը զատ-զատ որոշեց՝ նուրբերը, թանձրները, կարճերը, երկարները, առանձինները և կրկնաւորները։

Մեսրովպը գրերը առձեռն պատրաստի ձեւակերպելով և Հռուփանոսի ճարաար գրագրութեամբը համակերպելով՝ փոխադրեց Հայերէն տառերը Յունական տառերի շարադասութեանը:

Եւ այնուհետեւ մօտիկ գտնուող քաղաքների գպրոցներումը իւր ուսանող աշակերտներին շուտով պատուէր ուղարկեց՝ որ շուտով ժողովուին իւր մօտ:

Հայոց գրերի գիւտն եղաւ Փրկչի 406թ. նոյեմբերի 25-ին. Ա. Սահակի կաթողիկոսութեան 17-րդ՝ Հայոց Վռամշապուհ թագաւորի 15-րդ, իսկ Մեսրովպի անապատիցը քարոզութեան իջնելու 10-րդ տարին, որնա այնուհետեւ ապրեց 35 և կամ 36 տարի։ Եւ որովհետեւ այն օրերն արդէն ձմեռնային էին, ուստի Մեսրովպ սկսաւ իւր երկու աշակերտների եկեղեցացի Յովհանի և Պաղնացի Յովսէփի հետ Աստուածաշունչը՝ Առակացիցն սկսած՝ թարգմանել Հայերէնի և յետոյ Ա. Աւետարանը։

Եւ 407 թուի սկզբում սկսաւ վերադառնալ. նախ՝ գնաց այցելութեան՝ այն եպիսկոպոսներին՝ որոնց մօտ գնացել էր Հայոց գրերի գիւտի համար. ցոյց տուաւ նորանց Աստուածատուր նշանագրերը. և ապա մեծ յաջողութեամբ ճանապարհորդելով եկաւ և հասաւ Հայաստան՝ Արարատեան գաւառի արքայանիստ Վաղարշապատ քաղաքը - Ա. Էջմիածին։

Մեսրովալի դարձը երբոր լսեց Հայոց բարեպաշտ Վռամշապուհ թագաւորը և ո. Հայրապետ Սահակ Պարթեր, նախարարներով, եկեղեցականներով և ժողովրդի խուռն բազմութեամբ Մեսրովին պատահեցան Ռահ զետի ափին, նորան ընդունեցին ինչպէս Աստուածային պատգամներով լեռնից իջնող Մովսիսին, և տեսնելով նշանազրերը և թարգմանութիւնը զրուած հայկական նորաստեղծ տառերով և հայրենի բարբառով՝ նորանց սրտերը անպատճելի ուրախութեամբ լցուեցան, և հոգեսր երգերի օրհնութեամբ դարձան Վաղարշապատ քաղաքը:

Այսուհետեւ թագաւորի հրամանով ժողովուեցան մանուկների, բացուեցան ուսման զպրոցները, և այնպէս Հայաստանը սկսաւ զանազանակերպ զիտութեամբ, թարգմանութեամբ և զրաւոր իմաստասիրութեամբ ծաղկիլ:

Հայոց եկեղեցւոյ պաշտամանց ծխարանը՝ որ թարգմանիչների աշակերտաց ձեռքովը հաւաքուած էր, Ա. Մեսրովալի ձեռքովը յօրինուելով կարգաւորուեցաւ. և այն զիրքը նոյն իսկ նորա անունովը կոչուեցաւ „Մաշտոց“:

Երբոր Վրացիքը լսեցին, թէ Մեսրովալը Աստուծոյ օգնականութեամբ ստեղծել է Հայոց զիրը, իրանք էլ հրաւիրակ ուղարկեցին նորամօտ՝ իւրեանց մեծ իշխան Բակուր թագաւորի և Եպիսկոպոսապետ Մովսիսի աղերսագրով, որ գայ

և իրանց կարօտն էլ լցնէ, որովհետեւ նորանք չունեին ազգային առանձին գիր, այլ Յունաց և օտար ազգերի նշանագրերով էին բաւականանում:

Մեսրովպը առնելով Զաղայ անունով մէկին իրան թարգմանիչ և իւր մի քանի աշակերտներովը գնաց Վրաստան, նորանց համար պատրաստեց նշանագրեր՝ նորանց խօսքերի բուն յատկութեանցը համապատասխան. և այդ՝ այն գիրն է, որ մինչև այսօր Վրացիք գործ են դնում իւրեանց եկեղեցական գրքերումը, ինչպէս որ մեր երկաթագիրն է՝ հարազատ Մեսրովպեան գիր:

Եւ մի քանի տարիներից յետոյ՝ Մեսրովպը գնաց Աղուանք, նորանց Արսվաղենսա թագաւորը և Երեմիա եպիսկոպոսապետը աղաչեցին Մեսրովպին. և նա նորանց համար էլ պատրաստեց առանձին նշանագրեր. և Երեմիա կաթուղիկոսը նոյն գրովը արաւ Աստուածաշնչի թարգմանութիւնը Աղուանից բարբառով:

Մեսրովպը սկսաւ Հայաստանի զանազան կողմերում Փրկչի Ս. Աւետարանը քարողել, շատերին՝ կրթել քրիստոնէական ուսմամբ և շատերին՝ ընտրել հոգևոր բարձր կոչմամբ ծառայելու եկեղեցուն և ժողովրդին. և դառնալով Ս. Սահակի մօտ՝ պատմեց նորան իւր բոլոր արածները, և որովհետեւ այն ժամանակ Հայոց կէս մասը գտնվում էր Յունաց բաժնում և կէսը Պարսից Յունաց վերակացուները չէին թողնում Ս. Մես-

ըովալին սովորեցնել Հայերէն ուսումը, ուստի Ա. Սահակը Մեսրովալին և Վարդան զօրավարին թղղ-թով ուղարկեց Պօլիս փոքր Թէոդոս կայսեր և քաղաքի Ատամիկոս պատրիարքի մօտ, որոնք նոռ-բանց պատուով ընդունեցին և խնդիրը ուրա-խութեամբ կատարեցին՝ տալով հրաման Հայերէն ուսումը Յունաց բաժնի մէջ ազատ քարոզել և ուսուցանել:

Կայսրը Մեսրովալին կոչեց „Ակումիտ“ ըստ Յունաց „Ագիմիդիս“, որ թարգմանվում է „Ան-նինջ“ կամ „Անհանդիսա տքնող“. Վարդանին կար-գեց զօրքերի սպարապետ, այլև նորան հրաման տուաւ Կարնոյ գաւառում շինել մի նոր քաղաք: Վարդանը իւր դարձին շինեց նոր քաղաքը և կայսեր անունովը կոչեց „Թէոդոսոլիս“ այն է „Արդրում“:

Իսկ Ատամիկոս պատրիարքը Մեսրովալին կո-չեց „Եկեղեսիաստիկոս“ որ եկեղեցական լիակա-տար ուսման պատուոյ նշանի անուն էր:

Մեսրովան՝ Վարդանի հետ մի փոքր ժամա-նակ մնալով թագաւորական քաղաքում, թագա-ւորական կատարով և մեծաշուք պատուով դար-ձան Հայոց աշխարհը՝ Յունաց բաժնում, կայսերը հրովարտակով՝ որ ուղարկել էր արեելեան սպա-րապետ Անտիքոսին:

Յունաց բաժնում ժողովեցին Հայ մանուկ-ներին և զրին զպրոցներում, որոնց վերայ Մես-

րովալը կարգեց իւր զվասաւոր աշակերտներին, և
ինքը սկսաւ պարապել ճառեր գրելով, և մար-
դարէական ո. գրքերի նիւթերիցը գրքեր յօրի-
նելով և ո. Աւետարանը քարոզելով:

Հայոց Արշակունի վերջին թագաւոր Արտա-
շիրի պատճառաւ, երբոր մեծ ո, Սահակ Պարթեր
աքսորանքիցը վերագարձաւ իւր Աթոռը՝ Փրկչի
440 թուին, ոչ անսպան՝ նա իւր սրբալոյս հո-
գին տւանդեց իւր Տէր Յիսուս Փրկչի ձեռքը:

Մեսրովալը նորա տեղապահութիւնը ընդու-
նեց, ինքն էլ արդէն ալիորել էր, և տեսնելով
ազգի վիճակը, որ թագաւորութիւնը վերացաւ
Արշակունիաց զարմիցը. և քահանայապետութիւնը
վերջացաւ Լուսաւորչի ցեղիցը, սկսաւ հոգալ՝ որ
Քրիստոսի հօտը ազատ պահէ ապականիչ գայ-
լերից եւ Ա. Սահակի վախճանից վեց ամիս յե-
տոյ ինքն էլ սկսաւ փոքր ինչ հիւանդութիւն
ունենալ, Տիրոջ 441 թուի փետրուարի 14-ին և
ըստ ոմանց 19-ին, 86 ամաց. այս միջոցում
ներկայ էին իւր երեցագոյն աշակերտներից ո.
Յովսէփը և ո. Թաթիկը և շատ մեծամեծներ,
նորանց առաջ ո. Մեսրովալը վեր ելաւ նստեց. և
ձեռները դէպի երկինք՝ բոլոր մնացածներին
յանձնեց Աստուծոյ շնորհացը և օգնութեանը. և
երբոր նորա ձեռքերը այսպէս բազկատարած էին,
այն տան վերայ մի հրաշալի խաչանման լուսա-
ւոր տեսիլ երեցաւ, որ բոլորին էլ յայտնի տե-

սահնելի էր, բոլորն էլ անխտիր տեսնելով՝ խուռն բազմութեամբ լցվում էին այնտեղ:

Իսկ ս. Մեսրովպը՝ նոյն ժամուն, բոլոր ժողովուածներին վերջին ողջոյն և օրհնութիւնը տալով աւանդեց իւր ս. հոգին իւր Փրկիչ Յիսուսի ձեռքը:

Ս. Մեսրովպի մարմինի թաղման տեղի համար՝ զանազան որոշումներից յետոյ՝ քաջ հանդիսացաւ Հայոց աշխարհի մեծ հազարապետ Վահան Ամատունին, որ ս. Վարդանի եղբայր Հմայեակ Մամիկոնեանի հետ միացած՝ ս. Մեսրովպի մարմինը եկեղեցականների և աշխարհականների անսովոր մեծ բազմութեամբ, սաղմուների օրհնութիւններով, վառուած կանթեղներով և ջաներով և լուսափայլ շքեղ զարդերով տարան իւր գիւղը Օշական. ամբողջ ճանապարհին այն խաչաձև լուսաւոր նշանը դադաղի վերայ անբաժան գնում էր. և երբոր հասան Օշական՝ այնտեղ սրբոց վկայարանումը ամփոփեցին նորա պատուական մարմինը. և յետոյ այն լուսաւոր նշանը աներեսութացաւ. և իւրաքանչիւր ոք իւրեանց տեղը դարձան:

Եւ երեք տարի յետոյ Վահան Ամատունին այն վկայարանումը սրբատաշ-քարերով և գեղեցիկ քանդակործութեամբ պահպատճեցին մի. Եկեղեցի կառոյց. և ուկանի արծաթավ ճարպարաւական ակներով զարդարուած մատաներ պատրաստեց և



շատ շքեղ զարդերով պայծառացրեց. (Կորիւն,
Խորենացի և Փարպեցի):

Այս պահնծալի տաճարը՝ որ գտնվում էր
կիսակործան վիճակի մէջ. հոգելոյս Գէորգ Դ.
մեծանուն հայրապետը 1870 թուին սկսաւ հիմ
քիցը սրբատաշ քարերով և գեղանկար բանդակ-
ներով նորը և աւելի շքեղը կառուցանել:

Ահա այսպէս եղաւ Հայոց տառերի գիւտը
ո. Մեսրովակի ձեռքով և միևնոյն իսկ ժամանա-
կումն էլ ո. Սահակ Պարթեփ, ո. Մեսրովակի և
նորանց աշակերտների եռուն աշխատութիւննե-
րովը եղաւ Աստուածաշնչի և շատ ձեռագիր
գրքերի թարգմանութիւնը Յոյն և Ասորի լեզու-
ներից Հայերէնի:

Եւ այս 1500 տարիների ընթացքումը՝ որ
Հայ ազգը ուսման և զանազան գիտութեանց
մէջ ծաղկել ու յառաջադիմել է գրերի գիւտի
շնորհիւն է. որոնցով թարգմանուեցան բազմա-
թիւ օգտակար գրքեր. որոնք ինչպէս արևոտ շող՝
մարդկանց մտքերից և սրտերից հալածեցին մո-
լութիւնների հետ տգիտութեան խաւարը, ինչ-
պէս առաւօտու ցող՝ բուսցըին առաքինութիւն-
ների հետ իմաստութիւն և զանազան գիտու-
թիւն. և ինչպէս մանանայ՝ որի մէջ գտնվում է
ամեն կերակրների համը՝ այնպէս պարարեցին
ճաշակողների քիմքը՝ կեանքի վայելքի անդորր
քաղցրութեամբ և ցանկալի երջանկութեամբ. ու

ըովհետև այդ գրքերը տպէտներին՝ իմաստնացրին, տրտմածներին՝ սփոփեցին, վշտացածներին՝ մխիթարում, չքաւորներին՝ օգնեցին. զինուուրներին՝ քաջալերեցին, վախկոտներին՝ արիացին, ընկածներին՝ կանգնեցրին և մէկ խօսքով բոլորին հասցըրին կերպ-կերպ օգնութիւններ։

Ահա այս բոլորովը պարտական ենք Պարթևածին և. Սահակ մեծ հայրապետին, և ո. Մաշտոց-Մեսրովակ մեծ վարդապետին, ուստի այս 1500 ամեայ մեծ ու նշանաւոր յօրելեանի օրը՝ ուրախութեան փողերի հնչիւններով՝ մենք Հայեղայրներս՝ առանց խարութեան դաւանութեան՝ փեռեգենք անօգուտ բաժանման վայրագոյը և ազգային սիրով ի մի ձուլուած յայտնենք միահամուռ օրհնութիւններով՝ մեր երախտապէտ սըրտերի զգացմունքը՝ մեր երախտաւոր սուրբ և մեծ Հայրապետներին և. Սահակ Պարթևին և ո. Մաշտոց-Մեսրովակին։

Զմոռանանք սորանց հետ յիշելու և մեր սրտագին օրհնութիւնները ջերմաջերմ ընձեռելու մեր թագաւոր՝ Արշակունեաց փայլուն տանը պարծանք՝ վոամշապուհուն, որ մեր սուրբ և մեծ Հայրապետներին՝ Սահակ Պարթևին և ո. Մաշտոց—Մեսրովակին թէ ոգևորում էր խօսքով և թէ օգնում գործքով, որ Հայի „Գիրը“ գտնելու սկսած մեծ գործքը՝ ազգի օգտին յաջողեցնեն։

Զմոռանանք մեր երախտալիր օրհնութիւն-

Ներով յիշելու Դանիէլ Ասորի Եպիսկոպոսին, Հետմանոս Պղատոսին և քրիստոնեայ Հռումիանոսին, որոնք չխնայեցին իրանց բաժին ընկած օգնութիւնը մեր պաշտելի Մեորովպին:

Վերջապէս, ի նշան՝ յաւերժական մեր երախտագիտութեան, որոննենք Պարթև ո. Սահակի նշարները Աշտիշատում և կամ Բլուր գիւղի աւերալ զարմանակերտ վանքումը. և մեծահանդէս թափորով փոխադրենք Օշական և ո. Մաշասոց—Մեորովպի գերեզմանի մօտ ամփութենք՝ և գեղաքանդակ արձաններով շքեղացնենք ևրկուքի էլ պաշտելի գերեզմանները:

Եւ բացի սորանից, եկեղեցւոյ շրջապատը ընդարձակենք, և գաւթումը կառուցանենք Աստուածաբանութեան ճեմարան և կամ քահանայացուների համար մեծ ընծայարան, որ այնունեռև ճեռնադրուին քահանայ միմիայն նորանք՝ որոնք այդ ընծայարանի դասընթացները աւարտելով կատանան գերազանց աւարտման վկայական, և ճեռնադրութիւնից յետոյ՝ միմիայն նույանք կունենան իրաւունք կրօնուասուցչութեան:

Եւ թարգմանչաց տօնի օրը՝ բոլոր Հայերին համար դարձնենք Օշականումը ամէն տարի մեծ ուժու և մեծահանդէս տօնակատարութիւն, ընդհանուր Հայոց Վեհափառ Հայրապետի, խունը ժողովրդի և Ս. Էջմիածնի ամբողջ միաբանութեան մասնակցութեամբ. Քթիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:



ՅՊԵԴԻՐՈՒԹԵԸՆ ԳԻՒՑԸ ԵՒ ՍԿԶԲՆԸՆԻՈՐՈՒԹԻՒՆԸ
ՄԵՐ ԱԶԴԻ ՄԵԶ

Մասնաւոր Տեղեկութիւն



Կռւատեմբէրգ

Տպագրու-
թիւնը Քը-
րիստոսից
300 տարի
առաջ Զինա-
ցիք տախ-
տակների
վերայ էին
փորագրում
և տպում,
այնպէս՝ ինչ
պէս փորա-
գրում են
կնիքի (պե-
չատի) վե-

րայ ազգանուն, այնպէս էլ շարժական տախ-
տակների վերայ էին փորագրում և տպում:

Եւրոպացիք էլ Ժ. դարու վերջերումը և
ԺԵ. դարու սկզբում այս կերպով տպագրութիւն
դորձ դրած եղել են, մանաւանդ Լաւրենտիոս
Քոսթեո Հարլէմցու միջոցաւ, սակայն այսու առ-
մենայնիւ 1440 թուին աշխարհի օրհնութիւնն
ու փառքը ժառանգեց Մոգունտիա քաղաքացի

Յովհաննէս Կուտտեմբէրկը, որովհետեւ նա առաջինն եղաւ, որ փայտէ տախտակի վերայ ամբողջ երեսներ փորագրեց, և յետոյ առանձին առանձին թղթերի վերայ տպագրեց, բայց այս կերպի աշխատանքն էլ և ծախքն էլ շատ ու շատ ծանր էին, ուստի սկսաւ փայտէ տառերը զատ զատ փորել և կամ մետաղի վերայ, և գրերը իրար մօտ շարել և համրիչի հատերի նման իրար անցնել և թելով կապել, և փորձ արաւ այսպէս տպել Մթրասպուրկ քաղաքումը. այս միջոցն էլ նորան չեղաւ ձեռնառւ. ուստի 1444 թուին դարձաւ Մոգունդիա, այնտեղ ծանօթացաւ ֆուսթ անունով մի ոսկերչի հետ, որից ստանում էր նիւթ՝ միայն մետաղ. յետոյ ընկերացաւ Պետրոս Շեֆֆերի հետ. և 1452 թուին հնարեց այժմեան տպագրութեան կերպը, այն է ամեն մէկ գրին առանձին կաղապար շինեց և սկսաւ գրեր ձուլել. և ահա այսպէս Յովհաննէս Կուտտեմբէրկը՝ ֆուստի և Շեֆֆերի ընկերակցութեամբ կատարելագործեց տպագրութեան արուեստը, որով ազգերի բարբարոսական թանձնամած խաւարով պաշարուած մտքերը լուսաւուրել ուսման և դիտութեան ճառագայթներով և դարձաւ պատճառ ամենայն կերպ յառաջադիմութեան. տպագրութիւնը թէև շատերի էլ մըտքերն ու սրտերը թունաւորելու և ապականելու գործիք եղաւ. սակայն պէտք է ի նկատի ունե-

նալ նորա գերազանց օգուտը ընդհանուր մարդկութեան վերակենդանութեանը:

Տպագրութեան գիւտը հետզհետէ տարածուելով աշխարհիս զանազան կողմերում՝ սկսաւ ազգերին նախանձելի յառաջադիմական գիտութիւններով ծաղկեցնել, որից Հայ ազգը թէև դեռ զուրկ էր գտնվում, սակայն մի այնպիսի յաջողակ դէպքով հայն էլ ձեռք բերեց այս բարի ու չարի գիտութեան ծառի պտուղը՝ որից շատերը ճաշակելով բարի և օգտաւէտ գիտութիւններով ճոխացած մեծ յառաջադիմութեան քայլեր արին, թէև թունաւոր մասիցը ճաշակողներ էլ եղան և թունաւորեցին իրանց հետևողների սիրտն ու հոգին և նորանց դարձրին ազգի համար ցեցեր:

Միքայէլ կաթուղիկոսը Ժ. գարու կիսին անիշխանութիւնից, կոիւներից, և արտաքին թըշնամիների վախիցն ստիպւած Ս. Էջմիածնից գընաց Սեբաստիա. այստեղ Հայաստանի խառնակութեանց մասին սկսաւ մի թուղթ գրել և յանձնել Թօխաթեցի (Եւգոկացի) դպիր Արգարին, որը մի իմաստուն և շատ խելացի մարդ էր, նոռա Սուլթանշահ որդուն և Աղէքսանդր անունով մի խոհական քահանայի, որ տանին Հռովմ և յանձնեն Պիոս Դ. պապին:

Արգարը Հռովմում իւր բնական սրամտութեամբ տեսնելով արևմտեան ազգերի գիտու-

թիւնների լուսով բարդաւաճելը. և տեղեկանաւ լով որ այդ բարդաւաճման գլխաւոր առիթը տպագրութեան գիւտն է եղել. ուստի հարկ եղած մանրամասն տեղեկութիւնները հաւաքելուց յետոյ զնաց Վենետիկ, որ այն ժամանակ ճարշտարարուեստ քաղաքների գլխաւորներից մէկն էր և ընդարձակ ու հարուստ շահավաճառի համար Զուղայի ազնուական Հայերի գլխաւոր ապաստարանն էր։ Արգարը այնտեղի հայերիցն ոգեւորուելով 1565 թուին տպագրութեան գիւտից գրեթէ 100 տարի յետոյ Հայերէն գրեր փորել տուաւ և տպագրեց Սաղմոսը ութածալ գիրքով, որոնց մէկը Միլան քաղաքի Ամբրոսիան գրատան մէջ մինչև օրս էլ պահվում է։

Այն սաղմոսի յիշատակարանի առաջի տուղերը հետևեալն է. ոի թըվականի Հայոց Ռժդի ամին, եռ Թոխատցի Արգար Դպիրո՛ խնդրեցի զայս նոր գիրս ի Հոռվմի Պետրոս փափուն, և երես հրաման շինելու, բարեխօսութեամբ այս կարդինալացս և այս եպիսկոպոսիս և իմ գրայնիտ Սուլթանշահ որդւոյս։”

Այս Եւգոկիացի Դպիր Արգարը երկու տարի Վենետիկ մնալուց յետոյ զնաց և. Պոլիս և այնտեղ սկսեց տպել տպաների համար փոքր քերականութիւն և տօնացոյց։

Արգարից յետոյ տպագրութիւնը 100 տարուայ չափ և. Պոլիսում դադարեց, ինչպէս կար-

ծվում է նորա գրերն կամ կորել էին և կամ նորա Սուլթանշահ որդին գրերն առել և գնացել էր Հռովմ, որտեղ Դոմինիկոս Վասիլիոս տպարանապետի գործարանումը 1584 թուին տպել է „Գրիգորեան Տօմարը“ գործակցութեամբ Տիգրանակերտի քահանայ տէր Յովհաննիսի, որ կինը վախճանւելուց յետոյ Խաչատրը որդու հետ գնացել էր Հռովմ և ընկերակցել Սուլթանշահին:

Տօմարի յիշատակարանում յիշուած է և հետեւեալը „Ես զիս զաշխատողս զտէր Յովհաննէս Տէրզնցին և զվերակացու գործոյս զպարոն Սուլինաշահ՝ յազօթս ձեր սուրբ յիշման արժանի առնէք, աղաչեմ զձեզ:“

Այս ժամանակներումը՝ կամ մի քիչ աւելի առաջ, տպագրուած պէտք է լինի կրճատւած համառօտ ժամագիրը, որի ոչ թիւը կայ և ոչ տպագրութեան քաղաքը. գրերի ձեր՝ մինչեւ այն ժամանակուայ փորագրուածներից աւելի տձեւ, վտիտ, երկայնաձեւ և աւելի ժեղող դարու անհմուտ գրիչների ձեռագրի նման:

Աղթարքի գիրք կամ վարդապետութիւն էլ կայ, որոնք գուցէ Արգարեան տպագրութիւներից էլ հին լինին, բայց ստոյգ տեղեկութիւն չուենալու համար՝ որոշ բան չենք կարող ասել:

Միայն այս գիտենք, որ Արգարից 30 տարի առաջ 1539 թուին, Թէսէոս Ամբրոսիոս ա-

նունով Փաւիացի արևելեան լեզուների հմուտ
մի վարժապետ տպագրեց հաւաքմունք կամ
ծաղկաքաղ արևելեան լեզուների Փաւմիա քա-
ղաքումը:

Գրքի սկիզբը Քաղդէացւոց և Ասորւոց լե-
զուի այբուբենն է դրած, յետոյ էլ նորանց
դրքերից մի քանի ընտիր հատուածներ հան-
դերձ Լատին թարգմանութեամբ. նորանցից վեր-
ջը գրքի 142 էջի տասներեքերորդ գլխի մէջ՝
սկսում է մեր Հայերէն տառերի վերայ խօսիլ.
առաջ Հայաստանի վերայ մի համառօտ աշխար-
հագրական տեղեկութիւն դնելուց յետոյ՝ մեր
այր ու բէնն է շարում, Լատինական հնչմունք-
ներովը, յետոյ նորա յատկութեանց վերայ է
խօսում. մինչև 174 երեսը, և նորանցից յետոյ
մի քանի ամբողջ երես Հայերէն հատուածներ
կան Լատինական թարգմանութեամբ:

Երեսում է թէ Ռիվոլան իւր Հայ և Լատին
քերականութիւնը սորանցով և կամ սորանց հե-
տեղականութեամբ էին տպագրել Միլան քա-
ղաքում 1624 թուին, 9 տարի յետոյ էլ իւր
Հայ և Լատին բառագիրքը Փարիզումը, այս կա-
ղապարները հաւանական է՝ որ կորած լինին:

Յովհաննէս քահանայ Քամատանեանցը տես-
նելով գրերի պակասութիւնը և տպաղրութիւնից
առաջ եկած օգուտները, գնաց Լեհաստան, այն-
տեղ մեծ ջանքով առանց խնայելու դրամների և

աշխատութեան երկու տեսակ բոլոր գիր թափել տուաւ 1616 թուին, և յետոյ Մելիքսեղեկ կաթուղիկոսի օրովը՝ Իլվով քաղաքումը մի սաղմոսարան տպագրեց՝ տեսնելով որ ջանքի համեմատ աշխատութիւնը ընդունելութիւն չդուաւ, ձեռք վերցրեց այդ աշխատութիւնից:

Շատ հնարագէտ մարդիկ աշխատեցին այդպէս հարկաւոր արուեստի գիւտը բուն Հայաստանի մէջ մտցնեն, որոնց մէկն էր Ուրահեցի Արապիոն կաթուղիկոսը, որ նախ իւր աշակերտ Գրիգորին յանձնեց տպագրութեան արհեստին հետեւել. յետոյ տեսնելով, որ նորա բանը չէ, յանձնեց Անկիւրացի Յովհաննէսին, որը իտալական լեզուին ծանօթ էր. Սա գուցէ լսած էր, որ Արգարեան տառերը մահիցը յետոյ Հռովմտարուելով, այնտեղ մնացին, և յուսալով որ կարող է գտնել՝ Հռովմ գնաց, այնտեղ չգտնելով իւր ուզածը չորս հինգ տարուայ մեծ աշխատանքով մասնաւոր միջակ և մանր բոլոր գիր ձուլել տուաւ և անցնելով Վենետիկ՝ այնտեղ 1642 թուին տպագրեց Ս. Ներսէս Շնորհալու «Յիսուս որդի» և «Սաղմոս», իսկ Հռովմում մի «Խորհրդատեր» Արգարեան գրերով:

Անկիւրացի Յովհաննիսից յետոյ վենետիկցի տպարանապետ Միքայէլ Պարպոն մասնաւոր գիր փորել տուաւ Հայերէնի համար և 1680—1690 թ. թուին տասը տարուայ ընթացքում մի քանի

Հայերէն տպագրութիւններ ի լոյս ընծայեց:

Նոր~Զուղայու Ամենափրկիչ Վանքի տռաջնորդ Կեսարացի Խաչատուր վարդապետը՝ իւր միաբանների աշխատակցութեամբ մանր և խոշոր երկու տեսակ կազապար շինեց և նորանցով 1642 թուին տպագրեց Ատենի ժամագիրք և Հարանց վարքը. ժամագրքի յիշատակարանումը գրուած է հետևեալ տողերը. „Յանկ ելեալ կատարեցաւ տպագրութիւն հոգենուագ Սաղմոսացն Դաւթի ընդսմին և կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց... յաշխարհիս Պարսից, յարքայանիստ քաղաքիս ըստ գրոց „Ճօշ“ կոչեցելոյ, որ այժմ Սպահան արտաձայնի, ի գիւղաքաղաքիս Նոր~Զուղայու, ընդհովաննեաւ Ա. Ամենափրկիչ վանիցս, որ է մենաստան կուսակրօնից բանասիրաց.., ի վերակացութեան նահանգիս ընդհանուր Պարսկաստանի հեղանովի արք-եպիսկոպոսի և շնորհազարդ վարդապետի տեառն Խաչատրի, որ է բնիկ քաղաքաւ Կեսարացի, որոյ ջանիւքն և աշխատութեամբն եղեւ տպագրութիւնս. այս ի մէջ տոհմիս Հայկազեան, քանզի այս ամենաերջանիկ վարդապետս Խաչատուր օր ըստ օրէ տեսաներ զտպագրութիւնս ի մէջ ազգացն Լատինացւոց. ցանկայը միշտ որպէս զի լիցի ի մէջ Հայաստանեայցս. և յարաժամ ինդրէր հնար գիւտի արուեստիս այսորինկ. և իբրև ոչ գտաւ ուստեք առ ի լնուլ զիտափագ

յանկութեանն իւրոյ... սկսաւ աշխատիլ իւրով միաբանական ուխտիւն, մինչ զի ի կատար ենան գտագրութիւնս. և սփռեալ տարածեաց զգիրս ի մէջ հայաստանեայց“ և այնտ

Ահա զովելի, տօնելի և ըիւրաւոր պատուոյ փառքերի և պարծանքների արժանի Առաջնորդ և Միաբան, որ մի հեռաւոր ու խաւար անկիւնում գտնուած վանքի մէջ՝ իրանց նախանձելի ջանքերով գտնում են տպագրութեան արուեստը և տպագրում զբքեր. օրհնեալ լինի ձեր յիշտատակը՝ երջանիկ հայրեր:

Յակովը կաթուղիկոս Զուղայեցին էլ մեծ փափագ ունենալով, որ տպագրութեան արուեստը մեր ազգի մէջ տարածէ, ուստի Նարեցի Մատթէոս սարկաւագին ուղարկեց սովորելու այդ արուեստը. Մատթէոսը գնաց Վենետիկ և այնտեղից անցաւ Հոռվմ. այնտեղ երբոր գործը յաշջողեցնելու վերայ էր, „հակառակառէր և բարիատեաց“ ազգայինք զանազան մնօտի պատճառներով օգտակար գործը վշացրին. ուստի Մատթէոսը սիրտը կոտրած գնաց Հոլանդացւոց Ամսդերդամ քաղաքը, այնտեղ մի ճարտար արուեստագէտի երեք տեսակ գիր փորել տուաւ, իւր մօտն ունեցած օրինակների համեմատ, որ իրան տուել էր Մովսէս Բաբունապետը:

Նարեցին շատ կերպ-կերպ նեղութիւնների յաղթելով տպարան բացաւ և սկսաւ „Յիսուս

որդին՝ տպագրել. Երբոր 38-երորդ թերթն էր հասել՝ մահուան անկողին մտաւ և վախճանուեցաւ:

Այս ժամանակում Ոսկան վարդապետի եղբայր Աւետիսը վաճառականութեամբ գտնվում էր Ամսդերտամում, սա Ծարեցուն մեծ օգնութիւն արաւ թէ նիւթական և թէ բարոյական, նոր տպարանը՝ նորա իսկ ձեռքովը կտակել տուաւ ս. Էջմիածնին, և ինըը տուաւ նորա բոլոր պարտքերը և տպագրութեան գործը սկսաւ շարունակել, և որովհետեւ ինքը չունէր այնքան հմտութիւն՝ որ կարողանար գործը իւր մեծութեանը համապատասխան գլուխ տանել. ուստի նամակով ս. Էջմիածնից իւր եղբայր Ոսկան վարդապետին հրաւիրեց: Յակովը կաթուղիկոսը յօժար սրտով հրաման տուաւ Ոսկանին գնալու և այդ մեծ և օգտակար գործը գլուխ բերելու Ոսկանը իրանից առաջ իւր աշակերտ Անդրիանեցի կարապետ վարդապետին ուղարկեց Հոլանդիա, գործերը կարգի գնելու, նա երբոր Ամսդերտամ հասաւ: Աւետիսը՝ նոր գրեր փորել տուել էր Ֆունտիք Քրիստոֆլ ճարտար գերմանացուն, ուստի նորա հետ մէկ եղած 1662 թուին ժամագրքի առաջի տպագրութիւնն արին: Կարապետ վարդապետը տեսնելով Ոսկանի ուշանալը՝ շարականի խաղերը շինել տուաւ և 1664 թուին այդ սրբազն երգարանի առաջին տպագրութիւնն սկսաւ, այն ժամանակ Ոսկան վարդա-

պետը ս. Էջմիածնից դուրս գալով Ալիկուռնայ քաղաքն է հասնում, այնտեղ գտնելով իւր Աւետիս եղբօրը, որ վաճառականութեան համար այնտեղից պէտք է Զմիւռնիա գնար, նորա վաւերականովը տպարանը ձեռքիցն առաւ, և անցնելով Ամագերտամ՝ տեսաւ Կարապետ վարդապետի „Շարականի“ տպագրութեանը առաջ տանիլը, և որովհետեւ նօտր գիր չունէր, Ոսկանը այդ գրերն էլ սլատրաստել տուաւ և 1666 թուին սկսաւ գովսանքների արժանի գործունէութիւնը տպեց „Այբբենարան“, „Քրիստոնէական“ և Քերականութիւն. սորանցից յետոյ բիւրաւոր գովսանքների արժանի ձեռք զարկեց Աստուածաշունչ Ս. Գրքի տպագրութեանը, և այնուհետեւ արաւ և շատ գրերի տպագրութիւն։

Վերջապէս, մեր հոգեորականների անդուլ և անհանգիստ աշխատութիւններովը տպագրութեան արուեստը մուտք գործեց և Ս. Էջմիածին, որտեղ երջանկայիշատակ Սիմէօն հանճարաշատ կաթուղիկոսը, Հնդկաստանում բնակուող ջուղայեցի Աղայ Գրիգոր Խօջաջանեանի ծախքով 1771 թուին կառոյց Մայր Աթոռումը տըպարան, և Եւրոպայից բերել տալով թղթաշինութեան համար քաջանմուտ վարպետներ՝ բացարաւ և թղթաշինութեան գործարան և սկսաւ բազմաթիւ գրքերի տպագրութիւն։

Տպարանը հետզհետէ նորոգուելով և աստիճանաբար պակասները լրացնուելով, յառաջ էր գնում, որի անդնահատելի օգուտը և անհրաժեշտութիւնը տեսնելով վեհ Մակար Ս. կաթուղիկոսը սկսաւ ի հիմանց սրբատաշ քարերով նորը և գեղեցիկը կառուցանել. որ ահա այսօր

ժամանակի բոլոր պահանջներին համապատասխան կատարում է շատ յաջողակ տպագրութիւն և ի լոյս է ընծայում բազմաթիւ օգտաւէտ գըրքեր և „Արարատ“ ամսագիրը անընդհատ յօրէ սկզբնաւորութեան. Փառք Մայր Աթոռի երջանկայիշատակ Հայրապետներին, պատիւ աշխատասէր հոգևորականութեանը և պարծանք՝ առատաձեռնութեամբ օգնող ժողովրդին. Զամշեան, Բազմավէպեր և Շախաթունեան.

Հ Ա Յ Ի Ա Դ Օ Թ Փ Ը

Մեր հայրերի Աստուած անեղ,
Միութեան սէր՝ մեր սիրաը հեղ,
Որով անոյշ գարունն Հայոց,
Գայ և բուժէ մեր սրտի խոց,
Պահիք Ռուսաց մեր մեծ Կայսեր,
Ազգիս վերայ լից սիրաը սէր,
Որով Հայն էլ ուսմամբ ծաղկի,
Լաւ ազգերի կարգը անցնի:
Պահիք հաստատ մեր սուրբ Գահը:
Մեր վեհ Գէորգ գահակալը,
Որով Հայերս սերտ միանանք,
Հայաստանին շքեղ փայլ տանք:
Պահիք անխախտ մեր լոյս Հաւատ,
Մեր Գիր, Լեզուն ամուր հաստատ,
Որով Հայն էլ չը ջնջուի,
Ազգերի հետ ընդ միշտ ապրի:

Ապահովագործի թող միշտ ապրի



